




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԻՄՆԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1906 ԻՆ ԳԱՀԻՐԷ ԵՒ
ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1924 ԻՆ ԼՈՋԱՆ

▣ ՎԱՐՁ. ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ Ի ԲԱՐԻՋ ▣

ԲԱՐԻՋ

Գեղարուեստական Ցպարան խ. Մամիկեան
42, Rue de la Jonquière, 42
1930

361

2-25

361
2-25

1 MAR 2010

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ



05.06.2013

42.072

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՆՊԱՏԱԿ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ 1

Զուլցերիական Քաղաքային Օրենքին 60-79 Յօդուածներուն տրամադրութեանց համաձայն հիմնուած է Ընկերութիւն ճը ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ անունով:

Այս Ընկերակցութիւնը, կազմուած ընկերակցաբար (corporativement), պիտի ունենայ իրաւական անձնաւորութիւն (personnalité juridique): Անկախ կազմուած է յաջորդելու համար «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անունը կրող Ընկերութեան որ 15 Ապրիլ 1906ին հիմնուած էր Գահիրէի մէջ (Եգիպտոս), Պօղոս Նուպար փաշայի նախաձեռնութեամբ և անոր նախագահութեանը տակ, և որ չէր կրցած իբր քաղաքային անձնաւորութիւն (personnalité civile) ճանչցուիլ եգիպտական օրէնքներու ներկայ տրամադրութիւններով: Սոյն Ընկերութիւնը վերջնականապէս լուծուած է:

Հետեւաբար, ներկայ Ընկերակցութիւնը պիտի շարունակէ գործը այն Ընկերութեան որուն տեղը կ'անցնի, իր վրայ պիտի առնէ անոր գոյքն ու պարտքը, ճիշտնոյն նպատակներով, այսինքն՝

Ա.— Օժանդակել հայ ժողովուրդին եւ իր հայրենիքին մտաւոր եւ բարոյական զարգացման:

Բ.— Օգնել անոնց նիւթական ու տնտեսական վիճակին բարելաւման:

Գ.— Քաջալերել սոյն արդիւնքները յառաջ բերելու ծառայող ամէն ձեռնարկ ու հրատարակութիւն:

Ընկերակցութիւնը ծարղասիրական հաստատութիւն ճըն է. ո և է քաղաքական կամ առեւտրական հանգամանք չունի: Այս պայմանը հիմնական է:

Ըստ ներկայ Հիմնական Կանոնադրին տրամադրութեանց, յանուն Ընկերութեան կնքուած յանձնառութեանց և պարտքերու համար, Ընկերակցութեան անդամները ո և է պատասխանատուութիւն չեն ստանձներ:



63263-67

ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐ, ԿԵԴՐՈՆ, ՏԱՐԵՇՐՁԱՆ

ՅՕԴՈՒԱԾ 2

Այս Ընկերակցութեան Հիմնադիր անդամներն են Կեդրոնական Վարչական Ժողովի ներկայ անդամները և լուծեալ Ընկերութեան վերապրող Հիմնադիրները: Ասոնք են՝

- | | |
|--------------------------|-------------------------|
| Տ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ, | Տ. ՊՕՂՈՍ ԷՍՄԷՐԵԱՆ, |
| Տ. ԳԱՔՐԻԷԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ, | Տ. ՄԻՔԱՅԷԼ ՊԱՊԱՋԱՆԵԱՆ, |
| Տ. ԵՐՈՒԱՆԴ ԱՂԱԹՕՆ ՊԷՅ, | Տ. ՏԻԳՐԱՆ ԿԱՄԱՐԱՐԱՅԱՆ, |
| Տ. ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ, | Տ. ԱՐԱՄ ՃԷՎԼԱՀԻՐՃԵԱՆ, |
| Տ. ԳՐԻԳՈՐ ՍԻՆԱՊԵԱՆ, | Տ. ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻԻՇԿԵՐՏԱՆ, |
| Տ. ՍԵՐՈՎԱԲԷ ՍՎԱՃԵԱՆ, | Տ. Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ, |
| Տ. ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ, | Տ. ԱՌԱՔԷԼ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ, |
| Տ. ՋԱՐԵՀ ՆՈՒՊԱՐ, | Տ. Կ. ՇԷՐԻՏՃԵԱՆ ՊԷՅ: |
| Տ. ՎԼԱԶԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ, | |

Տարեշրջանը կը սկսի ամէն տարուան Յունւարի առաջին օրը:

ՅՕԴՈՒԱԾ 3

Ընկերակցութեան Կեդրոնը Լօզան է. ուրիշ տեղ կրնայ փոխադրուիլ Ընդհանուր Ժողովին որոշումով:

Ընկերակցութեան Կեդրոնը այժմ կը գտնուի Լօզան, Կրանշէն փողոց թիւ 8, Նօտար Հ. Ս. Պէրժիէի ծօտ:

ՅՕԴՈՒԱԾ 4

Ընկերակցութեան տեղադրութիւնը անսահման է:

ԱՆԴՐԱՄԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՅՕԴՈՒԱԾ 5

Ընկերակցութեան անդամ ըլլալու համար՝ պէտք է Կեդրոնական Վարչական Ժողովին կամ ստորեւ նախատեսուած Տեղական Մասնաժողովներէն ձեռնարկ խնդրանք ներկայացնել, և կամ երկու անդամի կողմէ ներկայացուիլ: Այդ ժողովը՝ նիստին ներկայ գտնուած անդամներու ձեռնամասնութեամբ՝ կը քուէարկէ ընդունելութիւնը, յետագայ 14րդ և 25րդ Յօդուածներուն տրամադրութեանց համաձայն:

Կարող է անդամակցիլ, առանց սեռի և դասանանքի խտրութեան, ամէն Հայ որ յանձն կ'առնէ յարգել ներկայ Կանոնադիրը և կանոնաւորապէս հատուցանել իր անդամովձարը:

ՄՈՒՏՔԻ ՏՈՒՐՔ ԵՒ ԱՆԴՐԱՄԱՎՃԱՐ

ՅՕԴՈՒԱԾ 6

Միութեան ամէն անգամ իր ընդունելութեան ժամանակ պարտաւոր է վճարել ծուռքի տուրք ճը և ամսական անդամավճար ճը, որոնց քանակը ինք ազատ է որոշելու: Սակայն ոչ ճէկ ատեն ծուռքի տուրքը զուիցերիական երկու ֆրանքէ և ամսական անդամավճարը զուիցերիական ճէկ ֆրանքէ պակաս չեն կրնար ըլլալ: Զանազան երկիրներ բնակող անդամներու համար սոյն գումարները պէտք է վերածուին ճիւղնոյն արժէքը ներկայացնող տեղական դրամներու:

Անդամները ազատ են ճիւղնաւոր վճարելու իրենց ճէկ տարուան անդամավճարները:

ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴՐԱՄՆԵՐ, ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴՐԱՄՆԵՐ ԵՒ ՅԿԵԱՆՍ ԱՆԴՐԱՄՆԵՐ

ՅՕԴՈՒԱԾ 7

Կեդր. Վարչ. Ժողովը կուտայ՝

Ա.— Բարերար Անդամի տիտղոսը այն անձերուն որ ճէկ անդամէն առնուազն 25000 զուիցերիական ֆրանքի համարժէք նուիրատուութիւն ճը կ'ընեն Միութեան:

Բ.— Պատուոյ Անդամի տիտղոսը այն անձերուն որ ճէկ անդամէն առնուազն 10000 զուիցերիական ֆրանքի համարժէք նուիրատուութիւն ճը կ'ընեն:

Գ.— Յիշանա Անդամի տիտղոսը այն անձերուն որ ճէկ անդամէն առնուազն 5000 զուիցերիական ֆրանքի համարժէք ծուռքի տուրք կը վճարեն կամ նուիրատուութիւն ճը կ'ընեն:

Բաց աստի, Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ այդ տիտղոսներէն ճին կամ ճիւղ տալ այն անձերուն որ բացառիկ ծառայութիւններ կը ձառուցանեն Միութեան: Այս որոշումը օրինաւորապէս կրնայ տրուիլ ճիւղնոյն Կեդր. Վարչ. Ժողովը բաղկացնող անդամներուն առնուազն երեք քառորդին կողմէ ընդունուի:

Լուծեալ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան Բարերար և Պատուոյ Անդամները իրաւամբ ներկայ Ընկերակցութեան Բարերար Անդամ և Պատուոյ Անդամ են:

ՎՏԱՐՈՒՄ

ՅՕԴՈՒԱԾ 8

Ոեւէ անդամ, երբ անարժան վարձուէք ձը ունենայ, Ընկերակցութեան անդամներու ցանկէն կը ջնջուի Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ՝ նիստին ներկայ գտնուող անդամներուն երկու երրորդին ձեռնամանութեան քուէով, յետագայ 14րդ Յօդուածին ձէջ կանխատեսուած պայմաններուն համաձայն:

Իր անդամավճարները կանոնաւորապէս չհատուցանող ո եւ է անդամ ինքնին կը դադրի Ընկերակցութեան մաս կազմելէ:

ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՅԹՆԵՐԸ

ՅՕԴՈՒԱԾ 9

Միութեան հասոյթները կը կազմեն՝

Ա.— Մուտքի տուրքերը,

Բ.— Անդամավճարներ,

Գ.— Նուիրատուութիւններ,

Դ.— Ընդհանուր կամ մասնաւոր հանգամանք կրող կտակներ,

Ե.— Հանգանակութիւններ,

Զ.— Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ ստեղծուած ուրիշ ո եւ է հասոյթի աղբիւրներ:

ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ՅԱՏԿԱՑՈՒՄ

ՅՕԴՈՒԱԾ 10

I.— ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

1.— Հիմնական Դրամագլուխի հաշուոյն պիտի տարուին՝

Ա.— Մուտքի տուրքերը,

Բ.— Անդամավճարներու ձէկ վեցերորդը,

Գ.— Առանց կանխորոշ նպատակի Հ. Բ. Ը. Միութեան եղած նուիրատուութեանց և կտակներուն բոլոր գումարները՝ զոր Կեդր. Վարչ. Ժողովը ներկայ Յօդուածին 2րդ հատուածին ձէջ նախատեսուած Մասնաւոր Դրամագլուխի հաշուոյն չի տանիր:

Ընկերակցութեան Հիմնական Դրամագլուխը անձեռնմխելի է: Այս պայմանը հիմնական է: Սոյն Դրամագլուխին գումարները Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ կը վերածուին հանրային արժեթուղթերու, — ինչպէս են՝ պետական, նահանգային կամ քաղաքներու փոխառութեանց պարտաթուղթեր, փոխադրական ընկերութեանց պարտաթուղթեր և ուրիշ առաջնակարգ արժեթուղթեր —

կամ վերջապէս հասութեան կալուածներու: Իսկ այն գոյքերը և արժեթուղթերը որ վերեւ նախատեսուած ղեկավարութեան չեն պատկանիր, կրնան նոյնութեամբ պահուիլ՝ եթէ նուէր ստացուած են:

2.— Մասնաւոր Դրամագլուխի հաշուոյն պիտի տարուին, ծախքերը ղեկավարէ վերջ, գումարը կամ արժէքը այն բոլոր նուիրատուութեանց և կտակներուն որ Միութեան եղած են կանխորոշ նպատակով, ինչպէս և գումարը նուիրատուութեանց և կտակներու զոր Կեդր. Վարչ. Ժողովը մասնաւոր նպատակի ձը կը յատկացնէ, վերը ըսուածին համաձայն:

Սոյն Մասնաւոր Դրամագլուխի գումարները ևս պիտի վերածուին արժեթուղթերու, Հիմնական Դրամագլուխին գումարներուն նման, եթէ երբեք նուիրատուները և կտակարարները տարբեր կերպով սահմանած չեն:

II.— ՀԱՍՈՅԹՆԵՐ

1.— Հիմնական Եկամուտներ

Սոյն հաշուոյն պիտի տարուին՝

Ա.— Անդամավճարներու հինգ վեցերորդը,

Բ.— Հիմնական Դրամագլուխի առհասարակ բոլոր եկամուտները, 10% ղեկավարէ յետոյ Պահեստի Հիմնադրամին համար՝ որու մասին ստորեւ պիտի խօսուի:

2.— Մասնաւոր Եկամուտներ

Սոյն հաշուոյն պիտի տարուին՝

Ա.— Մասնաւոր Դրամագլուխներու բոլոր եկամուտները,

Բ.— Մէկ մասը կամ ամբողջութիւնը այն նուիրատուութեանց և կտակներուն, որ նուիրատուներու և կտակարարներու կամքին համաձայն պէտք չէ յատկացուին Մասնաւոր Դրամագլուխներու հաշուոյն:

3.— Արտակարգ Հասոյթներ

Սոյն հաշուոյն պիտի տարուի հանգանակութեանց և այլ ամէն տեսակ արտակարգ հասոյթներու գումարը:

III.— ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հիմնական Դրամագլուխի յատուկ արժեթուղթերու և անշարժ կալուածներու պատահական անկումովը յառաջ գալիք բացը գոցելու համար Պահեստի Հիմնադրամ ձը կազմուած է, սոյն Դրամագլուխին եկամուտներուն վրայէն 10% վար զրուելով: Նոյն գործողութիւնը պիտի կատարուի նաեւ կանխորոշ նպատակաւ եղած զանազան կտակներու և նուիրատուութեանց մասին, որոնց պատկան եկամուտներուն վրայէն 10% վար պիտի զրուի,

բացի այն պարագայէն որ նուիրատուները և կտակարարները հակառակ պայման դրած ըլլան:

Այս զեղչը պիտի դադրի երբ տարեկան հաշուեփակին տեսնուի որ Պահեստի Հիմնադրածը պատկան Դրամագլուխին ձէկ հինգերորդին յանդամ է:

IV.— ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ ԿՏԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԵԱՆՅ

Վերեւ ցոյց տրուած պահեստի գումարները վար դրուելէ յետոյ, կանխորոշ նպատակով եղած նուիրատուութեանց և կտակներու դրամագլուխը և եկամուտները կը յատկացուին և կը գործածուին նուիրատուներու և կտակարարներու կամքին համաձայն:

V.— ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ ՀԱՍՈՑԹՆԵՐՈՒ

Հասոցներու արդիւնքը, վարչական, բրօքականտի և այլ ծախքերը զեղչուելէ վերջ, կը յատկացուի ընկերակցութեան նպատակներուն, Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ որոշուած պիւտճէի նախատեսութեանց սահմանին ձէջ: Սակայն և այնպէս այդ ծախքերուն համար վար դրուելիք սակերը պէտք չէ որ անցնին անդամավճարներու $\frac{5}{6}$ ին 15 $\frac{0}{100}$ և Մասնաւոր Դրամագլուխներու եկամուտներուն 10 $\frac{0}{100}$ ր:

Կեդր. Վարչ. Ժողովը կարող է յաջորդ տարեշրջանին փոխանցել հասոցներու զուտ արդիւնքին ձէկ ծախք:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԱՎԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ԱՆԳՈՐՐԱԳԻՐՆԵՐՈՒ

ՅՕԴՈՒԱԾ 11

Միութեան Տնօրէնութեան Դիւանէն տրուած ո և է ստացագիր պէտք է որ կրէ երկու ստորագրութիւն, Գանձապետին և Վարիչ-Պատուիրակին, և, ի բացակայութեան, անոնց փոխանորդներուն ստորագրութիւնները:

Շրջանակային Յանձնաժողովներէն և Տեղական Մասնաժողովներէն տրուած ո և է ստացագիր պէտք է նոյնպէս կրէ կրկին ստորագրութիւն, սոյն Յանձնաժողովներուն և Մասնաժողովներուն Ատենապետին և Գանձապետին կամ անոնց փոխանորդներուն ստորագրութիւնները:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կեդրոնի թղթակցութիւնները և հաղորդագրութիւնները պէտք է ուղղուին Տնօրէնութեան Դիւանին (տե՛ս Յօդուած 13), իսկ Շրջանակային Յանձնաժողովներու և Տեղական Մասնաժողովներու թղթակցութիւնները՝ անոնց Ատենապետներուն:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ, ԸՆՏՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐՈԳՈՒՄ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԵՐՈՒ ՀԵՏ

ՅՕԴՈՒԱԾ 12

1.— Կեդր. Վարչ. Ժողովը կը բաղկանայ առնուազն ինը և առ առաւելն տասնեւհինգ անդամներէ: Առաջին Կեդր. Ժողովը կազմուած է հետեւեալ կերպով՝

Տ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ,
Տ. ԳԱՅՐԻԷԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ,
Տ. ԵՐՈՒԱՆԴ ԱՂԱԹՕՆ ՊԷՅ,
Տ. ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ,
Տ. ԳՐԻԳՈՐ ՍԻՆԱՊԵԱՆ,
Տ. ՍԵՐՈՎԱԷ ՍՎԱՃԵԱՆ,

Տ. ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ,
Տ. ՄԻՔԱՅԷԼ ՊԱՊԱՉԱՆԵԱՆ,
Տ. ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ,
Տ. ԱՐԱՄ ԶԷՎԱԶԻՐՃԵԱՆ,
Տ. ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻԿԵՐՏԱՆ,
Տ. ԶԱՐԵՀ ՆՈՒՊԱՐ:

Կեդր. Վարչ. Ժողովին անդամներուն պաշտօնը անվճար է:

Բաց աստի, Կեդր. Վարչ. Ժողովին ձէջ, Ամերիկայի և Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովներուն իւրաքանչիւրը կ'ունենայ մնայուն աթոռ՝ զոր կրնայ գրաւել անձնապէս Յանձնաժողովին Ատենապետը, Փոխ-Ատենապետներէն ծին կամ Գանձապետը:

Սոյն երկու Յանձնաժողովներուն անդամները իրաւունք ունին անձամբ ներկայ գտնուելու Կեդր. Վարչ. Ժողովի նիստերուն, խորհրդակցական ձայնով:

2.— Կեդր. Վարչ. Ժողովին նորոգուած տեղի կ'ունենայ երեք տարին անգամ ձը, ճասնակի կերպով, յատենի Ընդհանուր Ժողովի, և այնպիսի եղանակով ձը որ ամբողջական նորոգուած ինը տարուան ձէջ լրանայ:

Անդամներու դադարման սոյն կարգը առաջին շրջանին համար վիճակաւ կ'որոշուի, և յետոյ հնութեան կարգաւ կը շարունակուի:

Դադարեալ անդամները վերընտրելի են:

Առնուազն 5 զուկցերեակաւ ֆրանք կամ համարժէք ամսավճար հատուցանող անդամները ծիայն կրնան Կեդրոնական Վարչական Ժողովին անդամակցիլ:

3.— Երբ Կեդր. Վարչ. Ժողովին անդամներուն թիւը 15էն պակաս է, Ժողովը կրնայ առժամապէս նոր անդամներ ընտրել, պայմանաւ որ որոշեալ թիւը չանցնի: Ընդհանուր Ժողովը, սոյն ընտրութեանց յաջորդող առաջին

գումարմանը մէջ, անոնք կը վաւերացնէ և կամ ուրիշներ կ'ընտրէ վերջնականապէս:

4.— Ու և է պատճառաւ պակսած անդամի ծր տեղ ընտրուող անդամ ճը կը պաշտօնավարէ մինչեւ այն ատեն՝ ուր պիտի լրանար իր փոխանակեալին պաշտօնը: Այն պարագային երբ Ժողովին անդամներուն թիւը Յօդուած 12ով նախատեսուած 15 թիւէն պակաս ըլլալով՝ նոր անդամի ճը ընտրութիւն կատարուի, այս վերջնոյն պաշտօնավարութիւնը կը լրանայ ընթացիկ եւսածեայ շրջանին վերջը:

Ատենագրութիւնները կը ստորագրուին նիստին ատենապետող անդամին և նոյն նիստին ներկայ գտնուող ուրիշ անդամի ճը կողմէ: Ատենագրութիւններէն ի հարկին տրուելիք ընդօրինակութիւնները կամ քաղուածները՝ Կեդր. Վարչ. Ժողովին Ատենապետին կամ Փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ պէտք է ստորագրուած ըլլան:

5.— Ընկերակցութիւնը երրորդներու հանդէպ ըստ օրինի պարտաւորուած և ներկայացուած կ'ըլլայ երբ միասին կը ստորագրեն հետեւեալ երեք անձերը.— Ժողովին Ատենապետը կամ Փոխ-Ատենապետներէն մին, Գանձապետը և Վարիչ-Պատուիրակը:

Սակայն և այնպէս, ու և է չէք, զրամական փոխանցումի կամ գանձումի կամ արժեթուղթերու վաճառման ու և է հրաման, պայմանաւ որ քառասուն հազար գուլիցերիական փրանքի գումար ճը կամ արժէք ճը չանցնի, կրնայ վաւերականօրէն ստորագրուիլ հաւաքաբար Գանձապետին և Վարիչ-Պատուիրակին կամ իրենց փոխանորդներուն կողմէ:

Ամէն յանձնառագիր և պայմանագրութիւն կրնայ նաև վաւերականօրէն ստորագրուիլ Կեդրոնական Վարչական Ժողովէն յատկապէս նշանակուած մէկ կամ աւելի պատուիրակներու կամ փոխանորդներու կողմէ: Այս պարագային, Ժողովին ատենագրութեան վաւերացեալ պատճէնը պէտք է որ վերագրեալ յանձնառագիրներուն կամ պայմանագրութեանց կցուած կամ շահագրգռուող կողմերուն հաղորդուած ըլլայ:

ԴԻԻԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾ 13

Կեդր. Վարչ. Ժողովը երեք տարուան համար իր անդամներուն մէջէն կ'ընտրէ Ատենապետ մը, երեք Փոխ-Ատենապետներ և Գանձապետ մը:

Լուծեալ է. Բ. Մ. Միութեան Կեդրոնական Ժողովին Ատենապետը

Ն. Վ. Պօղոս Նուպար Փաշա ներկայ Ընկերակցութեան Կեդր. Վարչ. Ժողովին ցկեանա Ատենապետը պիտի ըլլայ:

Ժողովը կը ստեղծէ և կը կազմակերպէ Միութեան վարչական և ել ճըտական ձիւղերուն համար Տնօրէնութիւն մը — Տնօրէնութեան Դիւան — անոր գլուխը դնելով Վարիչ-Պատուիրակ մը՝ Կեդր. Վարչ. Ժողովին անդամներուն մէջէն կամ զուրսէն ընտրուած: Վարիչ-Պատուիրակը, ինչպէս և Տնօրէնութեան Դիւանի պաշտօնեաները վճարեալ են:

Վարիչ-Պատուիրակը կը վարէ նաև Միութեան Ատենապետի պաշտօնը:

Կեդր. Վարչ. Ժողովը իր իրաւասութեանց մէկ մասը կը յանձնէ վարչական և ելճտական ձիւղերու Տնօրէնութեան, նոյն Տնօրէնութեան ներքին կանոնադրին նախատեսած սահմաններուն մէջ:

ԳՈՒՄԱՐՈՒՄՆԵՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՕԴՈՒԱԾ 14

Ա.— Կեդր. Վարչ. Ժողովը կը գումարուի ամէն անգամ որ Միութեան շահերը կը պահանջեն: Գումարումները տեղի կ'ունենան Ատենապետին, կամ անոր բացակայութեանը՝ Փոխ-Ատենապետներէն մէկուն և կամ Վարիչ-Պատուիրակին հրաւերով:

Բ.— Ժողովը կը գումարուի երբ առ նուազն երեք անդամներ պահանջեն:

Բացակայ վարիչ անդամները կրնան իրենց ձայնը տալ Ժողովին մէկ ուրիշ անդամին:

Գ.— Որպէսզի որեւէ գումարման մէջ տրուած որոշումները օրինական համարուին, պէտք է որ Ժողովին անդամներուն իսկական թիւին գոնէ կէսը ներկայ կամ ներկայացուած ըլլայ: Առնուազն երեք անդամներու անձամբ ներկայութիւնը անհրաժեշտ է. միւս անդամները կրնան ձայներն իրենց պաշտօնակիցներուն տալ: Ոչ մէկ ատեն սակայն անգամ մը իր ձայնէն զատ մէկէ աւելի ձայնի իրաւունք կրնայ ունենալ:

Կեդրոնական Վարչական Ժողովին որոշումները ներկայ կամ ներկայացուած անդամներու ձայներուն մեծամասնութեամբ կը տրուին:

Ձայներու հաւասար բաժանման պարագային Ատենապետին ձայնը գերակշիւ է:

Ընտրութիւններու ատեն անհրաժեշտ է ունենալ Ժողովը կազմող անդամներուն երկու երրորդի մեծամասնութիւնը:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԻՐԱՆԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅՕԴՈՒԱԾ 15

Ա.— Կեղր. Վարչ. Ժողովը Միութեան վարչութեան և գործառնութեանց ծախսի ամենալայն իրաւասութիւն և հեղինակութիւն ունի:

Մասնաւորապէս ամէն իրաւասութիւն ունի՝

Կատարելու Ընկերակցութեան Յօդուած 1-ով սահմանուած նպատակներուն իրագործման ծառայող ամէն գործ:

Օգնութիւն և պաշտպանութիւն ընծայելու ամէն Հայու, առանց դաւանանքի խտրութեան, հայազգի գիւղացիներուն նպաստելու, անոնց հայթայթելով սերմնացու, կենդանի, երկրագործական գործիք և ճշակելի հողեր:

Սովէ, հրեհէ կամ ուրիշ ո եւ է աղէտէ և համաճարակէ արկածեալ վայրերու բնակիչներուն օգնութեան հասնելու և ընդհանրապէս սատարելու ժողովուրդին առողջապահական պայմաններուն բարելաւման:

Գիւղերու մէջ ճշակութեան մասին այժմու գործնական գիտելիքները տարածելու, տեղական արհեստագործութեանց զարգացումին նպաստելու, երկրին պայմաններուն համապատասխան եղանակով աշխատութեան և արդիւնաբերութեան նոր միջոցներ ստեղծելու:

Հիմնելու կամ նպաստով օժտելու վարժարաններ, մատենադարաններ, ընթերցատուններ, արհեստանոցներ, հիւանդանոցներ, դարձանատուներ, որբանոցներ և ուրիշ նմանօրինակ հաստատութիւններ:

Ընդունելու կամ մերժելու ո և է նուիրատուութիւն և կտակ:

Ո և է գումար գանձելու և վճարումներ կամ ծախքեր ընելու, շարժուն և անշարժ ո և է ստացուածքի տիրանալու, ո և է արժեթուղթ կամ աւանդ յանձնելու կամ վերստանալու:

Ընկերութեան շահուն կամ օգուտին համար ո և է շարժուն ու անշարժ կալուած ստանալու կամ ձեռքէ հանելու, ո և է փոխանորդադիր յանձնելու կամ ո և է փոխհրկտակ (fidéicommiss) հաստատելու, իրեն պահելով վարչական բոլոր իրաւունքները՝ այդ կերպով մատակարարուած գոյքերը և ստացուածքները ետ առնելու կամ ուրիշներու փոխանցելու, ինչպէս նաեւ յիշեալ փոխանորդութեանց և փոխհրկտակներուն վերջ տալու:

Ընկերութեան անձեռնմխելի հիմնադրամներուն և դրամազուխներուն համար ո և է բեկանելի կամ անբեկանելի թրքսթ կազմելու, պայմանաւ որ այդ հիմնադրամներուն և դրամազուխներուն եկամուտները յանձնաձուլին և մատակարարուին Ընկերութեան կողմէ, Հիմնական Կանոնադրին և նուիրատուութեան պաշտօնագիրներուն տրամադրութեանց համաձայն:

Իրաւասութիւններու վերոյիշեալ թուումը բացառիչ է և ոչ սահմանիչ. մէկ խօսքով՝ Կեղր. Վարչ. Ժողովը ունի բոլոր այն իրաւունքները որ յատկապէս Ընդհ. Ժողովին վերապահուած չեն:

Կեղր. Վարչ. Ժողովը կարող է իր իրաւասութեանց ամբողջութիւնը կամ անոնց մէկ մասը յանձնել իր անդամներէն երկուքէն կամ երեքէն բաղկացած մէկ կամ աւելի Յանձնախումբերու:

Բ.— Կեղր. Վարչ. Ժողովը առաջնակարգ դրամատուններու մէջ պիտի պահէ Միութեան բոլոր արժեթուղթերը, ինչպէս նաեւ տրամադրելի գումարները:

Դ.— Կեղր. Վարչ. Ժողովը կը պատրաստէ Ընկերակցութեան տարեկան հաշուեկշիւը և Ընդհանուր Ժողովին կը մատուցանէ՝ իր պաշտօնավարութեան տեղեկագրին հետ:

Դ.— Կեղր. Վարչ. Ժողովի ո և է անդամ կրնայ Շրջանակային Յանձնաժողովներու և Շրջանակային Համաժողովներու նիստերուն ներկայ գլուխդիլ՝ առանց քուէի իրաւունքի:

ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾ 16

Այժմէն իսկ ստեղծուած են երկու շրջանակային բաժանումներ՝

1.— Ամերիկայի Միացեալ-Նահանգներունը, 2.— Եգիպտոսինը՝ որուն մաս կը կազմեն Սուրիա, Պաղեստին, Եթովպիա, Հնդկաստան և Յունաստան:

Կեղր. Վարչ. Ժողովը կրնայ փոփոխութեան ենթարկել ո և է շրջանակային բաժանումներու սահմանները, ինչպէս կրնայ ուրիշ շրջանակներ ստեղծել նաեւ այն ամէն տեղերը ուր անդամներուն և Տեղական Մասնաճիւղերուն թիւը օգտակար կ'ընծայէ այդ բանը, աշխարհագրական պայմաններն ալ նկատի առնելով:

ՅՕԴՈՒԱԾ 17

Իւրաքանչիւր Շրջանակ կը յանձնաձուլի Շրջանակային Յանձնաժողովի մը կողմէ, ինչպէս ստորեւ բացատրուած է:

Ամերիկայի Միացեալ-Նահանգներու առաջին Շրջանակային Յանձնաժողովը պիտի կազմուի Ամերիկայի Կեղր. Յանձնաժողովին արդի անդամներէ:

ընդհատուի առաջին Նրջանակային Յանձնաժողովը պիտի կազմուի գործադիր Ժողովին արդի անդամներէն:

Կեդր. Վարչ. Ժողովը իր ուղղակի վարչութեան տակ պիտի ունենայ Եւրոպայի Տեղական Մասնաճիւղերը, ինչպէս և ուրիշ երկիրներու ձեռք տնտեսող բոլոր այն Մասնաճիւղերը որոնց անդամներուն թիւը այժմ բաւական չէ այդ տեղերուն ձեռք Նրջանակներ ստեղծելու համար:

ՅՕԴՈՒԱԾ 18

Նրջանակային Յանձնաժողովները կը բաղկանան առնուադն 7 և առաւելն 11 անդամներէ: Ամէն երկու տարին անգամ ճը անոնք կը վերանորոգուին կիսովին: Իրենց անդամներուն ձեռքն անոնք կ'ընտրեն Ատենապետ ճը, ձեռք կամ երկու Փոխ-Ատենապետներ, Ատենապետի ճը և Գանձապետ ճը: Այս անուանումները պէտք է հաստատուին Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ:

Նրջանակային Յանձնաժողովները իրենց ճօտ կը կեդրոնացնեն իրենց Նրջանակին Մասնաճիւղերուն բոլոր թղթակցութիւնները, ինչպէս և հաշուակալութեան և գանձապահութեան վերաբերեալ բոլոր գործառնութիւնները: Ուղղակի պատասխանատու են Կեդր. Վարչ. Ժողովին:

Անոնք պարտին ամէն տարի Կեդր. Վարչ. Ժողովին ներկայացնել ճանրաման տեղեկագիր ճը՝ Միութեան իրենց շրջանակին ձեռք ունեցած գործունէութեան ճասին, անոր կցելով իրենց և իրենց Մասնաճիւղերուն հասոյթներու և ճախքերու վիճակացոյցները, ինչպէս նաև Համաժողովներու և Նրջանակային Յանձնաժողովներու և Նրջանակին Մասնաճիւղերուն ընտրութեանց և անուանումներու ցուցակները:

Նրջանակային Յանձնաժողովները պարտաւոր են առաւելել վեց ամիսը անգամ ճը Կեդր. Վարչ. Ժողովին և կամ 21րդ Յօդուածին համաճան անոր կողմէ կարգուած ելճտական ներկայացոյցիչին յանձնել բոլոր հասոյթները, պիւտճէով նախատեսուած ճախքերը ղեղչելէ վերջ:

ՅՕԴՈՒԱԾ 19

Ամէն տարի Նրջանակային Համաժողով ճը կը գումարուի, նախորդ տարու ճը Համաժողովին կողմէ նշանակուած քաղաքի ճը ձեռք: Առաջին Համաժողովին գումարուելիք քաղաքը կը նշանակուի Կեդր. Վարչական Ժողովին կողմէ:

Նրջանակային Համաժողովը կը բաղկանայ շրջանին բոլոր Մասնաժողովներուն կողմէ ընտրուած պատուիրակներէ: Իւրաքանչիւր Մասնաժողով կ'ընտրէ այնքան պատուիրակ որքան անգամ 50 անգամ ունի իր Մասնա-

ճիւղը, պայճանաւ որ պատգամաւորներուն թիւը հինգը չանցնի:

Նրջանակային Համաժողովը կ'ընտրէ իր Ատենապետը և իր Գիւանը: Որոշումները կը տրուին ճայներու ճեճամանութեամբ. ճայներու բաժանճան պարագային՝ Ատենապետին ճայնը գերակշիւ է: Ան կ'ընտրէ նաև Նրջանակային Յանձնաժողովին անդամները: Բացառաբար, Եգիպտոսի Նրջանակային Յանձնաժողովին անդամները կ'անուանուին, ինչպէս այժմ, Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ:

Կը լսէ Նրջանակային Յանձնաժողովին տեղեկագիրը, կը խորհրդակցի այն խնդիրներուն ճասին որ Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ իրեն կը յանձնուին և անոր կ'ենթարկէ այն ամէն առաջարկները որ կը ստատեն ճ. Բ. Ը. Միութեան բարգաւաճճան՝ իր շրջանակին ձեռք:

Նրջանակային Համաժողովը իր շրջանակին համար պիւտճէի ճրագիր ճը կը պատրաստէ և կը ղրկէ Կեդր. Վարչ. Ժողովին՝ ընդհանուր պիւտճէի ճրագրին ձեռք ճոցնելու համար:

Նոր ստեղծուած շրջանակի ճը առաջին Յանձնաժողովը կ'ընտրուի Կեդր. Վարչ. Ժողովի կողմէ:

ՅՕԴՈՒԱԾ 20

Նրջանակային Յանձնաժողովներու անդամները ճիշտ վերընտրելի են:

ՅՕԴՈՒԱԾ 21

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ նշանակել Նրջանակային Յանձնաժողովներու ճօտ ելճտական պատուիրակ ճը որ պաշտօն պիտի ունենայ ինքը տեղեկ պահելու Միութեան իր շրջանակին ձեռք ունեցած գործունէութեան վերաբերեալ ամէն տեսակ ելճտական խնդիրներու ճասին և ստանալու Նրջանակային Յանձնաժողովներուն ճօտ գումուած գումարները՝ անոնք յանձնելու համար Միութեան կեդր. անտուկին:

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ անուանել նաև ճասնաւոր պատուիրակ ճը որուն պաշտօնը պիտի ըլլայ աշխատակցի Նրջանակային Յանձնաժողովներուն հետ, Միութեան բրբախանտի գործին համար:

Այս երկու պատուիրակները իրաւունք չունին ճիշամտելու Նրջանակային Յանձնաժողովներուն վարչական խնդիրներուն:

Նրջանակային Յանձնաժողովի անդամի և ելճտական պատուիրակի պաշտօններուն ձեռք անհաշտութիւն չկայ:

ՅՕԴՈՒԱԾ 22

Նրջանակային Համաժողովը կը ձշակէ ներքին կանոնադիր ճը սահմանելու համար Նրջանակային Յանձնաժողովին և Մասնաժողովներու պաշտօնավարութեանց իրաւասութիւնները: Այս ներքին կանոնադիրը, որ պէտք է պարունակէ ներկայ Կանոնադրին հակառակ ու է տրամադրութիւն, գործադրութեան կը դրուի՝ Միութեան Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ վաւերացուելէն յետոյ:

ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՆՑ

ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ,

ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐՈԳՈՒՄԸ

ՅՕԴՈՒԱԾ 23

Ա.— Մասնաճիւղեր կրնան կազմակերպուիլ Կեդր. Վարչ. Ժողովին կամ Նրջանակային Յանձնաժողովին որոշմամբ ամէն ուր որ Միութիւնը ունի գէթ տասը անդամ:

Կեդր. Վարչ. Ժողովը կ'որոշէ ու կը սահմանէ իւրաքանչիւր Մասնաճիւղի գործունէութեան շրջանակը: Ան ու է ատեն կրնայ ընդարձակել կամ անձկացնել այդ շրջանակը:

Բ.— Տեղական Մասնաժողովները կ'ընտրուին այդ շրջանակին ամսական առնուազն 2 զուիցերիական ֆրանքի համարժէք գումար ճը վճարող անդամներէն բաղկացած ժողովէ ճը: Այդ ժողովին ճէջ, իւրաքանչիւր անգամ այնչափ ճայն ունի որչափ զուիցերիական 2 ֆրանքի համարժէք գումար կը ներկայացնէ իր վճարած ամսաբաժինը: Եթէ ներկայ անդամներու ճէջ ճայներու բացարձակ ճեճամասնութիւն չգոյանայ, երկրորդ քուէարկութիւն ճը կը կատարուի և այդ պարագային՝ հաճեճատական ճեճամասնութիւնը բաւական կը նկատուի:

Տեղական Մասնաժողովներու ընտրութիւնը Կեդր. Վարչ. Ժողովին կամ Նրջանակային Յանձնաժողովին վաւերացմանը կ'ենթարկուի:

Այն պարագային որ, որ եւ իցէ պատճառաւ ճը, վերեւ յիշատակուած Ժողովը կարելի է գումարել, Կեդր. Վարչ. Ժողովը կամ Նրջանակային Յանձնաժողովը կրնան ընտրել Մասնաժողով ճը որ պաշտօնի վրայ կը մնայ ճինչև որ կանոնաւոր ընտրութիւններ կարելի ըլլայ կատարել:

Բացառաբար, Կեդր. Վարչ. Ժողովին և Եգիպտոսի Նրջանակային Յանձնաժողովին կեդրոններուն ճէջ, Տեղական Մասնաժողովները կ'ընտրուին ամէն տարի նոյն Ժողովին և Յանձնաժողովին կողմէ, որոնց կուտան ուղղակի իրենց պաշտօնավարութեան համարը:

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ սակայն որոշել որ այս Մասնաժողովները ընտրութեամբ անուանուին:

Տեղական Մասնաժողովներու անդամներուն պաշտօնը անվճար է:

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԴԻԷԱՆՆԵՐԸ

ՅՕԴՈՒԱԾ 24

Իւրաքանչիւր Մասնաժողով իր անդամներուն ճէջէն ամէն տարի կ'ընտրէ Ատենապետ ճը, Ատենադպիր ճը և Գանճապետ ճը:

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅՕԴՈՒԱԾ 25

Կեդր. Վարչ. Ժողովին խորհրդակցութեանց համար 14րդ Յօդուածին ճէջ հաստատուած կանոնները նմանապէս գործադրելի են Մասնաժողովներու խորհրդակցութեանց համար:

Մասնաժողովներու ատենադրութիւնները՝ նիստին ատենապետող անդամին և նոյն նիստին ներկայ գտնուող ուրիշ անդամի ճը կողմէ կը ստորագրուին: Ատենադրութիւններէ հանուելիք ընդօրինակութիւնները կամ քաղուածները՝ Ժողովին Ատենապետին կողմէ պէտք է ստորագրուած ըլլան:

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՊԱՇՏՕՆԸ

ՅՕԴՈՒԱԾ 26

Ա.— Մասնաժողովները, իրենց շրջանակին սահմաններուն ճէջ, Միութեան նոր անգամ կը գտնեն, կը ջանան անոնց թիւը աւելցնել, իրենց տրամադրուած ամէն ճիջոյններով անոր ճաւաճմանը կ'աշխատին, կը գանձեն ճուտքի տուրքերը և բաժնեգիւնները, և նուիրատուութեանց գոյացուճին ջանադիր կ'ըլլան: Աճէն անգամ որ նոր անդամադրութիւններ և նուիրատուու-



թիւներ կ'ըլլան՝ նորընտիր անդամներու և նուիրատուներու անունները և հասցէները պարտին ծանուցանել իրենց պատկանած Շրջանակային Յանձնաժողովին, որ անոնք կը հրատարակէ: Մուտքի տուրքերը, ամսավճարները, ինչպէս նաև զուլցերիական 1000 Ֆրանքէ նուազ եղող նուէրները կը գանձուին Մասնաժողովին Ատենապետին և Գանձապետին, իսկ անոնց բացակայութեան՝ անոնց պաշտօնը առժամաբար վարելու համար Մասնաժողովին կողմէ անուանուած երկու անդամներուն ստորագրութիւնը կրող ընկալագիրներու և անդորրագիրներու փոխարէն: Իսկ 1000 զուլցերիական Ֆրանքէ աւելի նուիրատուութիւնները պէտք է ուղղուին Կեդր. Վարչ. Ժողովին կամ Շրջանակային Յանձնաժողովներու Գանձապետներուն, նշանակելով աղբիւրը և յարակից ծանրամասնութիւնները:

Մասնաժողովները, իրենց շրջանակին մէջ, կրնան՝ իրենց հսկողութեան և պատասխանատուութեան տակ՝ կազմել Օժանդակ Մասնաժողովներ, նաեւ ծանաւոր և առժամանակեայ Յանձնախումբեր, անոնց փոխանցելով իրենց յատուկ իրաւասութիւնները՝ ծառայելու կամ ամբողջովին:

Կարող են առաջարկներ ներկայացնել Կեդր. Վարչ. Ժողովին կամ իրենց պատկանած Շրջանակային Յանձնաժողովին, և անոնց անդամները կրնան ներկայ գտնուիլ յիշեալ Ժողովներու նիստերուն՝ առանց սակայն քուէի իրաւունքի:

Բ.— Մասնաժողովները պարտաւոր են կանոնաւոր տոմարակալութիւն մը ունենալ և գոյացած դրամները ղրկել իրենց պատկանած Շրջանակային Յանձնաժողովին Գանձապետին:

Իրաւունք չունին գործածելու ոչ մէկ գումար՝ բացի ծանր պէտքերու համար հարկաւոր եղած ծախքերէն, որոնց ամբողջութիւնը անդամավճարներուն $\frac{5}{6}$ ին 15% ը պէտք չէ անցնի:

Գ.— Իւրաքանչիւր վեցամսեայի վերջը, պարտաւոր են իրենց պատկանած Շրջանակային Յանձնաժողովին ղրկել իրենց հաշիւները՝ անոր կցելով իրենց շրջանակին վերաբերեալ խնդիրներու մասին տեղեկագիր մը:

Դ.— Պարտաւոր են ամենայն ճշգրտեամբ համակերպիլ Կեդր. Վարչ. Ժողովին և պատկան Շրջ. Յանձնաժողովին որոշումներուն: Յիշեալ Ժողովները իրաւունք ունին Մասնաժողովներու անդամները հրաժարեցնելու՝ երբ անոնք պարտաւանջ գտնուին, և անոնց տեղ առժամեայ յաջորդներ կարգելու, մինչև որ վերոգրեալ 23րդ Յօդուածին մէջ նշանակուած եղանակաւ վերջնական ընտրութիւն կատարուի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴՈՒԱԾ 27

Ա.— Ընդհանուր Ժողովը Միութեան անդամներուն ընդհանրութիւնը կը ներկայացնէ և անոր բոլոր գործառնութեանց վերին հեղինակութիւնը ունի: Իր որոշումները պարտաւորիչ են ամենուն, նոյն իսկ բացականչութեան և տարակարծիքներուն համար:

Բ.— Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունք ունին անոնք միայն, որ առնուազն մէկ տարիէ ի վեր Միութեան անդամակցած և ամսական նուազագոյն 5 զուլցերիական Ֆրանքի համարժէք անդամավճար հատուցած են կանոնաւորապէս: Իւրաքանչիւր անգամ իրաւունք ունի այնչափ ձայնի որչափ անգամ իր ամսավճարը կը պարունակէ զուլցերիական 5 Ֆրանքի համարժէք գումարը:

Ի պաշտօնէ Ընդհ. Ժողովին կը մասնակցին Տեղ. Մասնաժողովներու անդամները, ինչպէս նաև Բարերար և Պատուոյ Անդամները՝ որոնց մասին խօսուած է 7րդ Յօդուածին մէջ: Բացի այն ձայներէն՝ զոր կրնան ունենալ իբրեւ բաժնեւէջ անդամ, Բարերար Անդամներէն իւրաքանչիւրը 10 ձայնի, իսկ Պատուոյ Անդամներէն իւրաքանչիւրը 4 ձայնի իրաւունք ունի:

Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունք ունեցող որեւէ անգամ կրնայ իր տեղը ներկայացուցիչ կարգել այդ իրաւունքը ունեցող ուրիշ ունէ անգամ մը: Ներկայացուցիչը իր ձայներէն զատ կ'ունենայ իր փոխանորդեալին ձայներն ալ: Սակայն անգամ մը, ոչ մէկ պարագայի մէջ, իր ունեցած ձայներն ալ մէջը ըլլալով, 20 ձայնէ աւելի չի կրնար ունենալ:

Փոխանորդագիրներու ստորագրութիւնը պարտի վաւերացուած ըլլալ կ'ամ օրինական ձեւակերպութեամբ, կ'ամ Կեդր. Վարչ. Ժողովին կամ Շրջանակային Յանձնաժողովներուն և կամ Տեղական Մասնաժողովներուն Ատենապետին կամ Փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ:

Գ.— Ընդհանուր Ժողովը կը գումարուի Լօղան կամ այլուր, ըստ Կեդր. Վարչ. Ժողովին որոշման, օրակարգի խնդիրներուն ամփոփումը պարունակող հրաւիրագրով մը, որ կը հրատարակուի գումարման համար որոշուած օրէն երեք ամիս առաջ, իսկ ստիպողական պարագայի մէջ՝ առնուազն երեսուն օր առաջ:

Դ.— Անոր կը նախագահէ Կեդր. Վարչ. Ժողովին Ատենապետը, իսկ ասոր բացակայութեան՝ Փոխ-Ատենապետներէն ճին կամ Ատենապետի պաշտօնը կատարող վարիչ անդամը:

Ատենապետը կ'անուանէ Ատենապետը: Քուէախոյզ կը նշանակուին ամէնէն աւելի ձայն ունեցող և այդ պաշտօնը յանձն առնող երկու անդամներ:

Ե.— Կեդր. Վարչ. Ժողովին կողմէն պատրաստուած օրակարգին ձեջ նշանակուած խնդիրներէն զատ՝ ուրիշ նիւթերու վրայ կարելի չէ խորհրդակցիլ:

Ընդհանուր Ժողովին ատենագրութիւնները կը ստորագրուին դիւանի անդամներէն: Ատենագրութիւններէն հանել պէտք եղած ընդօրինակութիւնները կամ քաղուածքները՝ Կեդր. Վարչ. Ժողովին Ատենապետէն և կամ Փոխ-Ատենապետներէն ձեկուն կողմէ պէտք է ստորագրուին:

Զ.— Ընդհանուր Ժողովը կը գումարուի ամէն տարի Կեդր. Վարչ. Ժողովին որոշած թուականին՝

Լսելու համար Կեդր. Վարչ. Ժողովին տեղեկագիրը՝ Ընկերակցութեան կացութեան մասին, և ընդունելու համար բոլորուած տարեշրջանին հաշիւները, որ նախապէս՝ Ժողովին գումարուէն 15 օր առաջ անդամներու տրամաբան տակ դրուած ըլլալու են Միութեան Կեդրոնին ձեջ,

Ներկայացուած հաշիւները վաւերացնելու կամ ուղղելու համար,

Երբ հարկ ըլլայ՝ վարիչներուն ընտրութիւնները կատարելու համար,

Եւ անօրինութիւններ ընելու համար այն ամէն խնդիրներու մասին՝ որ հրաւիրագրին ձեջ նշանակուած օրակարգին մաս կը կազմեն:

Է.— Վերոգրեալ խնդիրներէն զատ, Ընդհանուր Ժողովին անկ է Կանոնագրին վրայ ըլլալիք փոփոխութիւններուն, յաւելումներուն կամ յապաւումներուն մասին ո եւ է որոշում տալ, մասնաւորաբար՝

ա) Ընկերակցութեան նպատակը կազմող առարկաներէն ձեկուն ընդարձակուծը, սեղծուծը, բարեփոխուծը կամ ձեւափոխուծը, առանց սակայն ուէ պարագայի ձեջ փոփոխելու կամ խաթարելու իր ընդհանուր նպատակը և իր հիմնական պայմանները (Յօդուած 1 և 10):

բ) Ընկերակցութեան անուան ձեւափոխուծը կամ ալլափոխուծը, պայմանաւ որ այդ փոփոխութիւնը՝ ընդհանուր նպատակին և հիմնական հանգամանքին ո եւ է ալլալու կամ վնաս չպատճառէ և ենթադրել իսկ չտայ:

գ) Ընկերակցութեան ո եւ է եղանակաւ ձուլուծը՝ համանման կամ նոյն նատեսակ ուրիշ Ընկերակցութեան ձը հետ, և կամ վերջապէս Ընկերակցութեան կազմալուծուծը:

Վերոգրեալ պարագաներուն թուուծը լոկ բացատրիչ է և ոչ թէ սահմանափակող:

Ը.— Վերեւ ա. բ. և գ. հատուածներով թուարկուած պարագաներուն ձեջ, Ժողովին խորհրդակցութիւնները այն ատեն ծիայն օրինական կ'ըլլան երբ ներկայ և ներկայացուած անդամները՝ Ընդհանուր Ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն առնուազն կէսը կը կազմեն, և որոշուծը օրինական ըլլալու համար՝ պէտք է ընդունուի մեծամասնութենէ ձը, որ ներկայ և ներկայացուած անդամներուն գէթ երեք քառորդը ներկայացնէ: Այսուհանդերձ, եթէ նիստին ձեջ Ընդհ. Ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն կէսը ներկայ կամ ներկայացուած չէ, Ժողովը կրնայ վերոյիշեալ մեծամասնութեամբ առժամանակեայ որոշում ձը տալ: Այդ պարագային, նոր Ընդհանուր Ժողով ձը կը գումարուի՝ երկու շաբաթուան նուազագոյն ժամանակամիջոցի ձը ձեջ, ընդունուած առժամեայ որոշումը պարունակող նոր հրաւիրագրով ձը. այդ որոշումը վերջնական կ'ըլլայ եթէ նորոգ գումարման ձեջ ներկայ և ներկայացուած անդամներուն ձայներուն երեք քառորդին կողմէ ընդունուի, բաւական է որ Ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն գոնէ մէկ քառորդը՝ այդ նիստին ներկայ կամ ներկայացուած ըլլայ:

Ուրիշ ո եւ է պարագայի ձեջ, Ընդհ. Ժողովը՝ թէ՛ տարեկան և թէ՛ արտակարգ նիստ գումարելուն՝ վաւերական կերպով խորհրդակցած կ'ըլլայ, եթէ ներկայ և ներկայացուած անդամներուն թիւը գոնէ մէկ հինգերորդը ըլլայ Ընդհանուր Ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն թիւին. իսկ որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ: Եթէ այդ օրինական թիւը չի գոյանայ, երկրորդ նիստ ձը կը գումարուի և վաւերական կերպով կը խորհրդակցի՝ ինչ որ ալ ըլլայ ներկայ անդամներուն թիւը:

Ընտրութեան պարագաներուն ձեջ, եթէ բացարձակ մեծամասնութիւն չի կայանայ, երկրորդ քուէարկութիւն ձը կը կատարուի և այն ատեն համեմատական մեծամասնութիւնը բաւարար կը նկատուի:

Թ.— Կեդր. Վարչ. Ժողովը պարտաւոր է տարեկան գումարման օրակարգը անցընել այն առաջարկութիւնները, որ այս նպատակով իրեն ներկայացուած են հրաւիրագրին հրատարակուէն առաջ՝ Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունք ունեցող և գէթ յիսուն ձայնի ամբողջութիւն ձը ներկայացնող առնուազն հինգ անդամներու խուծրի ձը կողմէ:

ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄ

ՅՕԴՈՒԱԾ 28

Երբոր Բնդհանուր Ժողովը կազմալուծման որոշում տայ, պէտք է նշանակէ այն հայկական ընկերակցութիւնը կամ հաստատութիւնը որ պիտի յաջորդէ Հ. Բ. Ը. Միութեան և շարունակէ անոր գործերուն վարչութիւնը և տնօրինութիւնը, համաձայն Միութեան Կանոնագրին մէջ սահմանուած նպատակներուն, ինչպէս նաև համաձայն նուիրատուներուն և կտակարարներուն կամքին՝ նուիրատուութեանց և կտակներուն վերաբերմամբ:

Այն պարագային ուր կազմալուծումը որոշելու համար ի նիստ հրաւիրուած Բնդհանուր Ժողովը չկարենայ օրինաւորապէս գումարուիլ Կանոնագրով նախատեսուած պայմաններուն համաձայն, Կեդր. Վարչական Ժողովին Նախագահը, կամ անոր տեղը բռնող անձը, ի նիստ պիտի հրաւիրէ հետեւեալ անձերէն բաղկացած Յանձնախումբ մը, որ Միութեան կազմալուծումը պիտի որոշէ և պիտի նշանակէ Միութեան յաջորդելիք հայկական ընկերակցութիւնը կամ հաստատութիւնը:

Այդ Յանձնախումբը պիտի բաղկանայ հետեւեալ անձերէն՝

ա) Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին Նախագահը կամ Փոխ-Նախագահներէն մին,

բ և գ) Միութեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու Շրջանակային Յանձնաժողովէն և Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովէն կամ անոնց յաջորդած կազմակերպութիւններէն մէջ մէկ պատուիրակ,

դ) Երեւանի Քաղաքային Վարչութենէն պատուիրակ մը,

ե) Էջմիածնի Վեհ. Ս. Կաթողիկոսէն պատուիրակ մը,

զ) Կիլիկիոյ Վեհ. Ս. Կաթողիկոսէն պատուիրակ մը,

է) Կ. Պոլսի Հայոց Ամեն. Ս. Պատրիարքէն պատուիրակ մը,

ը) Երուսաղէմի Հայոց Ամեն. Ս. Պատրիարքէն պատուիրակ մը,

թ) Ամերիկայի Միացեալ-Նահանգներու Հայ Բողոքական Եկեղեցիներէն պատուիրակ մը,

ժ) Վենետիկի Միթրարեան Միաբանութենէն պատուիրակ մը:

Եթէ, ո եւ է պատճառաւ, վերոյիշեալ անձերէն մին, հրաւիրագիրներուն մէջ նշանակուած թուականէն առ առաւել մէկ ամիս պայմանաժամու մէջ չկարենայ ներկայանալ Կեդրոնական Վարչական Ժողովին կեդրոնատե-

ղին՝ քուէարկութեան մասնակցելու համար, այդ պարագային ներկայ անդամներուն խորհրդակցութիւնը օրինաւոր պիտի նկատուի և անոնք պիտի կրնան, ձայներու մեծամասնութեամբ, ընտրելու Միութեան յաջորդելիք հայկական ընկերակցութիւնը և կամ հաստատութիւնը, կը բաւէ որ առնուազն հինգ անդամ ներկայ ըլլան:

Վերջապէս, այն պարագային ուր յիշեալ Յանձնախումբը չկարենայ գումարուիլ ո եւ է պատճառաւ, կամ, գումարուելէ յետոյ, չկարենայ որոշման մը յանգիլ, վերոյիշեալ կազմակերպութիւններէն կամ անձերէն ո եւ է մէկը իրաւունք պիտի ունենայ Հ. Բ. Ը. Միութեան կազմալուծման և անոր յաջորդելիք հայկական ընկերակցութեան, հաստատութեան կամ կազմակերպութեան ընտրութեան հարցը ենթարկել Հ. Բ. Ը. Միութեան կեդրոնատեղին եղող Լօղանի Դաշնակցային Դատարանին Նախագահին կողմէ, և այս Դատարանին չգոյութեան պարագային՝ Անգլիոյ Արդարութեան Բարձրագոյն Ատեանին կողմէ նշանակուած իրաւարարի մը իրաւարարութեանը:

Միութիւնը իր հիմնական Դրամագլուխը և իր մասնաւոր Դրամագլուխներուն մէկ մասը Թրքսթի վերածած ըլլալով, եթէ վերոյիշեալ անձերէն կամ կազմակերպութիւններէն մին իրաւարարութիւնը յառաջ չբերէ, այն ատեն Թրքսթիին — որ չի կրնար անգործաձելի թողուլ Թրքսթին եկամուտները որ որոշ նպատակներու յատկացուած են — անկ պիտի ըլլայ յառաջ բերել իրաւարարութիւնը, նշանակելու համար այն հայկական ընկերակցութիւնը կամ հաստատութիւնը կամ կազմակերպութիւնը, որուն պէտք է Թրքսթին (Trustee) յանձնէ Թրքսթին տարեկան եկամուտները:

Ներկա պարագային մէջ ալ, իրաւարարական վճիռը վերջնական և անվերաքննելի պիտի ըլլայ, և ծախքերն ալ Թրքսթին կողմէ պիտի հոգացուին:



Ներկայ Կանոնագրին մէջ կասարուած փոփոխութիւններ բուխարուած են Միութեան Ընդհանուր Ժողովին կողմէ, իր 18 Նոյեմբեր 1925ի, 19 Նոյեմբեր 1826ի, 18 Նոյեմբեր 1927ի, 19 Հոկտեմբեր 1928ի եւ 11 Յուլիս 1930ի նիստերուն մէջ:



43042

97